# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 07

10 հուլիսի 2025 թվական

**ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ**

Ավագանու նստավայր

գ. Փամբակ

Մասնակցում էին՝

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝ Սուրեն Կոստանդյանը, Սամվել Անանյանը, Աշոտ Անտինյանը, Սերյոժա Սարդարյանը, Գրիգոր Կարապետյանը և Շուշանիկ Հակոբյանը:

«Բարգավաճ Հայաստան» կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝ Սասուն Մարանդյանը, Սևակ Խաչատրյանը, Նաիրա Հարությունյանը և Սերյոժա Եսայանը:

Նիստից բացակայում էին՝

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝ Արշակ Սրապյանը, Արայիկ Քոչարյանը, Էմմա Գասպարյանը, Պավլիկ Պապինյանը և Արմենուհի Ոսկանյանը:

Նիստին նեկա էին աշխատակազմի պատասխանատուներ:

***Նիստն իրավազոր է՝ նիստին ներկա են ավագանու 10 անդամ***

**ՆԻՍՏԸ** - Նիստը վարող Սուրեն Կոստանդյանը ժամը 14.00-ին նիստը հայտարարեց բացված: **Նա ողջունեց ներկաներին և առաջարկեց հաստատել օրակարգը՝ 11 հարցերով:**

***Քվեարկությամբ, կողմ՝ 10, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 069-Ա/:***

**Հաստատվեց օրակարգը, ինչով էլ սպառվեց ներկայացված օրակարգի առաջին հարցը.**

**Հաստատված օրակարգը՝**

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու 2025թ-ի հուլիսի 10-ի թիվ 07 արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին:

զեկ. Ս. Կոստանդյան

2. «ՇԵՆ» ԲՀԿ-ի կողմից իրականացվող «Լոռու մարզի Դեբետ բնակավայրի մանկապարտեզի վերանորոգման աշխատանքներ» ծրագրի իրականացման համար համայնքի բյուջեից համաֆինանսավորում կատարելուն համաձայնություն տալու մասին:

զեկ. Հ. Մացակյան

3. Փամբակ համայնքի կյանքի դժվարին իրավիճակում գտնվող, մասնավորապես՝ զոհված զինծառայողների, պատերազմի վետերանների, ռազմական գործողությունների արդյունքում անհետ կորած, հաշմանդամություն ստացած զինծառայողների և քաղաքացիական անձանց, ռազմական գործողությունների արդյունքում փախստական դարձած անձանց ընտանիքների, այդ թվում այլ օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով սոցիալապես անապահով դարձած ընտանիքներին 2025 թվականի II եռամսյակում տրամադրված սոցիալական աջակցության մասին:

զեկ. Լ. Անդրիասյան

4. ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի բյուջեի կատարման 2025թ-ի II եռամսյակի կատարած ֆինանսական հաշվետվության մասին:

զեկ. Կ. Շերմազանյան

5. ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու 2024թ-ի դեկտեմբերի 25-ի թիվ 157-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

զեկ. Կ. Շերմազանյան

6. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի հողային հաշվեկշիռը հաստատելու մասին:

զեկ. Ա. Օհանյան

7. Դիրան Ազատի Լոկմագյոզյանին համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի նկատմամբ սերվիտուտի իրավունք տրամադրելուն համաձայնություն տալու մասին:

զեկ. Ա. Օհանյան

8. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն ուղղակի վաճառքով, ընդլայնման նպատակով Գայանե Լավրենտիի Մկրտումյանին օտարելու մասին:

զեկ. Ա. Օհանյան

9. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն ուղղակի վաճառքով, ընդլայնման նպատակով Ալվարդ Ռուբենի Մարգարյանին օտարելու մասին:

զեկ. Ա. Օհանյան

10. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն ուղղակի վաճառքով, ընդլայնման նպատակով Վրեժ Յուրիկի Ավագյանին օտարելու մասին:

զեկ. Ա. Օհանյան

11. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն ուղղակի վաճառքով, ընդլայնման նպատակով Նարինե Շալիկոյի Փահլևանյանին օտարելու մասին:

զեկ. Ա. Օհանյան

**ԸՆԹԱՑՔԸ՝**

**1. ԼՍԵՑԻՆ** - «ՇԵՆ» ԲՀԿ-ի կողմից իրականացվող «Լոռու մարզի Դեբետ բնակավայրի մանկապարտեզի վերանորոգման աշխատանքներ» ծրագրի իրականացման համար համայնքի բյուջեից համաֆինանսավորում կատարելուն համաձայնություն տալու մասին հարցի նախագիծը:
- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական, քարտուղարության, անձնակազմի կառավարման և զարգացման ծրագրերի բաժնի պետ Հասմիկ Մացակյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ առաջարկում է տալ համաձայնություն «Շեն Ֆրանսիայի» ֆինանսավորմամբ իրագործվող «Փամբակ համայնքի Դեբետ բնակավայրի մանկապարտեզի վերանորոգման աշխատանքներ» ծրագրի իրականացմանը և համայնքի բյուջեից ծրագրին համաֆինանսավորմանը: Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմում է 7.130.600 ՀՀ դրամ, որից՝ համայնքի բյուջեից համաֆինանսավորման չափը կազմում է 2.488.600 ՀՀ դրամ:
Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:
Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:
***Քվեարկությամբ, կողմ՝ 10, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 070-Ա/:***

**2. ԼՍԵՑԻՆ** - Փամբակ համայնքի կյանքի դժվարին իրավիճակում գտնվող, մասնավորապես՝ զոհված զինծառայողների, պատերազմի վետերանների, ռազմական գործողությունների արդյունքում անհետ կորած, հաշմանդամություն ստացած զինծառայողների և քաղաքացիական անձանց, ռազմական գործողությունների արդյունքում փախստական դարձած անձանց ընտանիքների, այդ թվում այլ օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով սոցիալապես անապահով դարձած ընտանիքներին 2025 թվականի II եռամսյակում տրամադրված սոցիալական աջակցության մասին հարցի նախագիծը:
- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ Լիլիթ Անդրիասյանը:

Զեկուցողը առաջարկեց ընդունել ի գիտություն, որ Փամբակ համայնքի բյուջեից 2025 թվականի II եռամսյակում կյանքի դժվարին իրավիճակում գտնվող 4 բնակչի տրամադրվել է ընդհանուր 124000 ՀՀ դրամի սննդի, դեղորայքի քարտեր և շինանյութի գումար:
Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:
Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:
***Քվեարկությամբ, կողմ՝ 10, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 071-Ա/:***

**3. ԼՍԵՑԻՆ** - ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի բյուջեի կատարման 2025թ-ի II եռամսյակի կատարած ֆինանսական հաշվետվության մասին հարցի նախագիծը:
- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի առաջատար մասնագետ Կիմա Շերմազանյանը:
Զեկուցողը հակիրճ ներկայացրեց Փամբակ համայնքի 2025 թվականի բյուջեի երկրորդ եռամսյակի հաղորդումը.

ԵԿԱՆՈՒՏՆԵՐԻ ԳԾՈՎ՝

Փամբակ համայնքի 2025 թվականի բյուջեի երկրորդ եռամսյակի եկամուտները նախատեսված 446837.7 հազ.դրամի դիմաց փաստացի կազմել են 396702.9 հազ. դրամ, կամ կատարողականը կազմել է 88.8 %: Նախորդ՝ 2024 թվականի համեմատությամբ եկամուտները ավել է կատարվել 11253.4 հազ. դրամով՝ կամ կատարողականը կազմել է 103.0%:
Վարչական մասի եկամուտները նախատեսված (պլանավորված) 390894.6 հազ. դրամի դիմաց փաստացի կատարվել է 375530.9 հազ դրամ՝ ապահովելով 96.1 % կատարողական: Ֆոնդային մասի եկամուտները նախատեսված (պլանավորված) 111470.4 հազ. դրամի դիմաց փաստացի կատարվել է 21172.1 հազ դրամ՝ ապահովելով 19.0 % կատարողական:

2025 թվականի բյուջեի երկրորդ եռամսյակի սեփական եկամուտները նախատեսվել են 91034.6 հազ. դրամ: Փաստացի հավաքագրումը կազմել 75670.9 հազ. դրամ, կատարողականը կազմելով 83.1 %: 2024թ-ի համեմատությամբ եկամուտները ավել է գանձվել 18682.8 հազ. դրամով: Նախորդ տարվա համեմատությամբ կատարվել է .132.8 % կատարողական:

Ներկայացվում է Փամբակ համայնքի 2025 թվականի բյուջեի երկրորդ եռամսյակի սեփական եկամուտների վերլուծությունը ըստ հարկատեսակների /եկամտատեսակների/

Գույքահարկի ապառք համայնքների վարչական տարածքներում գտնվող շենքերի և շինությունների մասով – երկրորդ եռամսյակի նկատմամբ փաստացի հավաքագրումը կազմել 66.0 հազ. դրամ, կատարողականը կազմելով 66.0%: Նախորդ տարվա համեմատությամբ պակաս է գանձվել 254.3 հազ. դրամ,կամ նախորդ տարվա համեմատությամբ կատարվել է 20.6 %-ով:

Հողի հարկի ապառքի մասով – երկրորդ եռամսյակի նկատմամբ փաստացի հավաքագրումը կազմել է 1450.2 հազ. դրամ, կատարողականը կազմելով 1450.2 %: Նախորդ տարվա համեմատությամբ ավել է գանձվել 290.1 հազ. դրամ, կամ նախորդ տարվա համեմատությամբ կատարվել է 125 %-ով:
Անշարժ գույքի հարկի մասով – երկրորդ եռամսյակի համար նախատեսված 20503.1 հազ. դրամի նկատմամբ փաստացի հավաքագրումը կազմել է 8812.5հազ. դրամ, կատարողականը կազմելով 43.0 %: Նախորդ տարվա համեմատությամբ ավել է գանձվել 1105.3 հազ. դրամ, կամ նախորդ տարվա համեմատությամբ կատարվել է 114.3 %-ով:

Գույքահարկ փոխադրամիջոցների մասով – երկրորդ եռամսյակի համար նախատեսված 28280.6 հազ. դրամի նկատմամբ փաստացի հավաքագրումը կազմել է 21741.4 հազ. դրամ, կատարողականը կազմելով 76.9 %: Նախորդ տարվա համեմատությամբ պակաս է գանձվել 1874.0 հազ. դրամ,կամ նախորդ տարվա համեմատությամբ կատարվել է 92.0 %-ով:

Տեղական տուրքերի մասով – երկրորդ եռամսյակի համար նախատեսված 5249.2 հազ. դրամի նկատմամբ փաստացի մուտքերը կազմել են 6472.9 հազ. դրամ, կատարողականը կազմել է 123.3 %: Նախորդ տարվա համեմատությամբ ավել է գանձվել 2240.5 հազ. դրամ, նախորդ տարվա համեմատությամբ կատարվել է 152.9 %-ով:

Այլ եկամուտների մասով –երկրորդ եռամսյակի համար նախատեսված 37001.7 հազ. դրամի նկատմամբ փաստացի հավաքագրումը կազմել է 37128.0հազ. դրամ, կատարողականը կազմելով 100.3%:

Պաշտոնական դրամաշնորհներ՝ դոտացիաներ.

Պաշտոնական դրամաշնորհների՝ դոտացիայի մասով – 2025թվականի երկրորդ եռամսյակի համար նախատեսված 299860.0 հազ. դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 299860.0 հազ. դրամ, կատարողականը կազմել է 100 %: Նախորդ տարվա համեմատությամբ ավել է

կատարվել 42627.6 հազ. դրամով, կամ նախորդ տարվա համեմատությամբ կատարվել է 116.6 %-ով:
2025 թվականի երկրորդ եռամսյակի ընթացքում վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե փաստացի հատկացումներ չեն եղել:

ԾԱԽՍԵՐԻ ԳԾՈՎ՝

Փամբակ համայնքի 2025 թվականի բյուջեի երկրորդ եռամսյակի միջոցների հաշվին իրականացված ընդհանուր ծախսերը նախատեսված 662148.4 հազ. դրամի դիմաց փաստացի կատարվել են 324883.7 հազ. դրամով, կամ կատարողականը կազմել է 49.0%: Նախորդ՝ 2024թվականի համեմատությամբ ծախսերը ավել է կատարվել 26829.3 հազ. դրամով՝ կամ նախորդ տարվա համեմատությամբ կատարվել է 109.0:
Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:
Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:
***Քվեարկությամբ, կողմ՝ 10, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 072-Ա/:***

**4. ԼՍԵՑԻՆ -** ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու 2024թ-ի դեկտեմբերի 25-ի թիվ 157-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին հարցի նախագիծը:
- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի առաջատար մասնագետ Կիմա Շերմազանյանը:
Զեկուցողը ներկայացրեց, որ առաջարկվող փոփոխություններով նախատեսվում է ծախսերի գծով 08.02.04՝ «Այլ մշակութային կազմակերպություններ» նախահաշվի, 4819 /Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին/ հոդվածից պակասեցնել 1000000 ՀՀ դրամ, որը տեղափոխել 01.06.01՝ «Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ» նախահաշվի, 4241 մասնագիտական ծառայություններ հոդված՝ անշարժ գույքի շուկայական արժեքի գնահատման ծառայության համար:
09.01.01՝ «Նախադպրոցական կրթություն» նախահաշվի, 5112՝ շենքերի և շինությունների կառուցում հոդվածից 2.488.600 ՀՀ դրամ տեղափոխել նույն նախահաշվի 5511՝ համաֆինանսավորման հոդված, «Շեն Ֆրանսիայի» ֆինանսավորմամբ իրագործվող «Փամբակ համայնքի Դեբետ բնակավայրի մանկապարտեզի վերանորոգման աշխատանքներ» ծրագրին համաֆինանսավորում կատարելու համար:
Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:
Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:
***Քվեարկությամբ, կողմ՝ 10, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 073-Ն/:***

**5. ԼՍԵՑԻՆ -** Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի հողային հաշվեկշիռը հաստատելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի գլխավոր մասնագետ Էդմոն Բաղդասարյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ ղեկավարելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջներով առաջարկում է հաստատել ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի հողային հաշվեկշիռը 01.07.2025թ-ի դրությամբ:
Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:
Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:
***Քվեարկությամբ, կողմ՝ 10, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 074-Ա/:***

**6. ԼՍԵՑԻՆ** - Դիրան Ազատի Լոկմագյոզյանին համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի նկատմամբ սերվիտուտի իրավունք տրամադրելուն համաձայնություն տալու մասին հարցի նախագիծը:
- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի գլխավոր մասնագետ Էդմոն Բաղդասարյանը:

Զեկուցողը առաջարկեց, հաշվի առնելով Դիրան Ազատի Լոկմագյոզյանի դիմումը տալ համաձայնություն նրան սեփականության իրավունքով պատկանող 06-034-0101-0021 կադաստրային ծակագրով հողամասին ճանապարհ ապահովելու նպատակով, Փամբակ համայնքի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 06-034-0115-0007, կադաստրային ծածկագրից 0,067208 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության, այլ հողատեսքը անորոշ ժամկետով սերվիտուտի իրավունքով օգտագործման տրամադրելուն: Սերվիտուտի տարեկան վճարի չափը սահմանել 5000 /հինգ հազար/ ՀՀ դրամ:
Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:
Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:
***Քվեարկությամբ, կողմ՝ 10, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 075-Ա/:***

**7. ԼՍԵՑԻՆ** - Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն ուղղակի վաճառքով, ընդլայնման նպատակով Գայանե Լավրենտիի Մկրտումյանին օտարելու մասին հարցի նախագիծը:
- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի գլխավոր մասնագետ Էդմոն Բաղդասարյանը:

Զեկուցողը առաջարկեց, հաշվի առնելով Գայանե Լավրենտիի Մկրտումյանի դիմումը, տալ համաձայնություն նրան սեփականության իրավունքով պատկանող 06-107-0103-0002 կադաստրային ծածկագրով 0,099002 հա հողամասին կից գտնվող 06-107-0103-0032 կադաստրային ծածկագրով 0,097557 հա մակերեսով համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասը ընդլայնման նպատակով, ուղղակի վաճառքով Գայանե Լավրենտիի Մկրտումյանին օտարելուն: Հողամասի վաճառքի գին սահմանել կադաստրային արժեքի չափով՝ 328 377 (երեք հարյուր քսանութ հազար երեք հարյուր յոթանասունյոթ) ՀՀ դրամ:
Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:
Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:
***Քվեարկությամբ, կողմ՝ 10, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 076-Ա/:***

**8. ԼՍԵՑԻՆ** - Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն ուղղակի վաճառքով, ընդլայնման նպատակով Ալվարդ Ռուբենի Մարգարյանին օտարելու մասին հարցի նախագիծը:
- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի գլխավոր մասնագետ Էդմոն Բաղդասարյանը:
Զեկուցողը առաջարկեց հաշվի առնելով Ալվարդ Ռուբենի Մարգարյանի դիմումը, տալ համաձայնություն Ալվարդ Ռուբենի Մարգարյանին սեփականության իրավունքով պատկանող 06-107-0006-0025 կադաստրային ծածկագրով 0.354832 հա հողամասին կից գտնվող 06-107-0006-0030 կադաստրային ծածկագրով 0,066339 հա մակերեսով համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասն ընդլայնման նպատակով, ուղղակի վաճառքով Ալվարդ Ռուբենի Մարգարյանին օտարելուն: Հողամասի վաճառքի գին սահմանել կադաստրային արժեքի չափով՝ 223 300 (երկու հարյուր քսաներեք հազար երեք հարյուր) ՀՀ դրամ:
Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:
Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:
***Քվեարկությամբ, կողմ՝ 10, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 077-Ա/:***

**9. ԼՍԵՑԻՆ** - Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն ուղղակի վաճառքով, ընդլայնման նպատակով Վրեժ Յուրիկի Ավագյանին օտարելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի գլխավոր մասնագետ Էդմոն Բաղդասարյանը:
Զեկուցողը առաջարկեց հաշվի առնելով Վրեժ Յուրիկի Ավագյանի դիմումը, տալ համաձայնություն Վրեժ Յուրիկի Ավագյանին սեփականության իրավունքով պատկանող 06-023-0068-0003 կադաստրային ծածկագրով 0,07196 հա հողամասին կից գտնվող 06-023-0068-0006 կադաստրային ծածկագրով 0,0165 հա մակերեսով համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասը ընդլայնման նպատակով, ուղղակի վաճառքով Վրեժ Յուրիկի Ավագյանին օտարելուն: Հողամասի վաճառքի գին սահմանել կադաստրային արժեքի չափով՝ 84 945 (ութանասունչորս հազար ինը հարյուր քառասունհինգ) ՀՀ դրամ:
Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:
Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:
***Քվեարկությամբ, կողմ՝ 10, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 078-Ա/:***

**10. ԼՍԵՑԻՆ** - Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն ուղղակի վաճառքով, ընդլայնման նպատակով Նարինե Շալիկոյի Փահլևանյանին օտարելու մասին հարցի նախագիծը:
- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի գլխավոր մասնագետ Էդմոն Բաղդասարյանը:
Զեկուցողը առաջարկեց հաշվի առնելով Նարինե Շալիկոյի Փահլևանյանի դիմումը, տալ համաձայնություն նրան սեփականության իրավունքով պատկանող 06-107-0041-0012 կադաստրային ծածկագրով 1,01755 հա հողամասին կից գտնվող 06-107-0041-0018 կադաստրային ծածկագրով, 0,639161 հա մակերեսով համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասն ընդլայնման նպատակով, ուղղակի վաճառքով Նարինե Շալիկոյի Փահլևանյանին օտարելուն: Հողամասի վաճառքի գին սահմանել կադաստրային արժեքի չափով՝ 2 151 416 (երկու միլիոն մեկ հարյուր հիսունմեկ հազար չորս հարյուր տասնվեց) ՀՀ դրամ:
Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:
Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:
***Քվեարկությամբ, կողմ՝ 10, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 079-Ա/:***

ՆԻՍՏԻՆ ՆԵՐԿԱ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ _____

ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ _____

ԵՍԱՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ _____

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՍԵՎԱԿ _____

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ _____

ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ _____

ՀԱԿՈԲՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ _____

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ _____

ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ _____

ՍԱՐԴԱՐՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՂ՝ ՌԱԻՍԱ ՄԻՆԱՍՅԱՆ